ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 13/19

03.07.2019թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)՝** քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ վճռաբեկ դատարանը (նախագահող դատավոր՝ Լ. Թադևոսյան, այսուհետ՝ Դատարան), 15. 04. 2019թ. դիմելով ՀՀ սահմանադրական դատարան, խնդրել է որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համապատասխանությունը կասկած է հարուցում այնքանով, որքանով սահմանված կարգավորումների պայմաններում գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, չի հանդիսանում մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք՝ վտանգելով անձի ազատության հիմնարար իրավունքը:

Դատարանի դիրքորոշմամբ՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խափանման միջոցների համակարգում կալանավորումն անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու ամենախիստ միջոցն է, քանի որ առավելագույն չափով սահմանափակում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները:

Միևնույն ժամանակ, որպես կալանավորմանը միակ այլընտրանքային խափանման միջոց՝ գործող քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է գրավի կիրառումը, որը հնարավորություն է տալիս կալանքի կիրառման հիմքերի և պայմանների առկայության պարագայում չզրկել անձին ազատության իրավունքից:

Սակայն, գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում, երբ օրենսդիրը մի կողմից այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը պայմանավորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին

մասում թվարկված՝ խափանման միջոցների կիրառման բոլոր հիմքերով, մյուս կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում որպես գրավի կիրառման նպատակ է սահմանում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը և նույն հոդվածի 6-րդ մասով գրավի գումարը պետության եկամուտ դարձնելու հնարավորություն է նախատեսում միայն մեղադրյալի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվեու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու դեպքերում, գրավը գործուն միջոց չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խափանման միջոցների կիրառման մյուս հիմքերը, այդ թվում՝ մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու համար: Այսինքն՝ գրավի կիրառման դեպքում մեղադրյալի մոտ բացակայում է գրավի առարկան կորցնելու սպառնալիքը, որը կկաշկանդեր նրան ազատության մեջ գտնվելու դեպքում ձեռնպահ մնալ գործի քննությանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ կատարելուց:

Վերոնշյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ վկայակոչված օրենսդրական կարգավորումների պայմաններում դատարանի կողմից կալանավորումը միակ այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելիս, այն չի ծառայում որպես գործուն միջոց՝ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալի վարքագծի պատշաճությունը երաշխավորելով գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը զսպելու համար: Արդյունքում, նշված հիմքով կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս գրավի միջնորդությունն օրենսդրական կարգավորումների վկայակոչմամբ կարող է ինքնաբերաբար մերժվել՝ առանց ըստ էության քննության առարկա դարձվելու, ինչն ընդունելի չի համարվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

Դատարանի գնահատմամբ՝ կալանավորումը միակ այլընտրանքային խափանման միջոցով՝ գրվով փոխարինելու վերաբերյալ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների և այդ պայմաններում ձևավորված ոչ միասնական իրավակիրառ պրակտիկայի արդյունքում ողջամտորեն վտանգվում է անձի ազատության իրավունքը: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ մինչդատական վարույթի ընթացքում ներկայացված միջորդությունների ընդհանուր թվաքանակում գերակշռում են դատարանների կողմից միջնորդությունների բավարարման դեպքերը՝ առանց գրավի կիրառման:

Վերոգրյալի ամփոփմամբ՝ Դատարանը արձանագրել է, որ հիմնավոր կասկածներ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդածի 1-ին և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին համապատասխանության առնչությամբ առ այն, որ սահմանված կարգավորումների պայմաններում գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, չի հանդիսանում մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը

չեզոքացնելու գործուն երաշխիք՝ վտանգելով անձի ազատության հիմնարար իրավունքը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատարանի դիմումով վիճարկվող քրեադատավարական դրույթների, մասնավորապես՝ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի համաձայն՝**

1. Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

. . .

6. Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատարանի որոշումը գրավատուն կարող է բողոքարկել վերադաս դատարան:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի (Անձնական ազատությունը) համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

…

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. . . . :

Վիճարկվող դրույթների սահմանադրականության գնահատման համար անհրաժեշտ է նախ բացահայտել նշված դրույթների բովանդակությունը քրեադատավարական այլ դրույթների հետ կապի և հարաբերակցության մեջ:

Մասնավորապես, համաձայն **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի՝**

1. Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում

նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Խափանման միջոցներն են՝

1) կալանավորումը.

2) գրավը.. . :

4. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված: Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածից հետևում է, որ խափանման միջոցների, այդ թվում նաև՝ կալանավորման և գրավի կիրառման նպատակը *քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի* ***ոչ պատշաճ վարքագիծը կանխելն ու դատավճռի կատարումն ապահովելն է:***

Նշված հոդվածում հիշատակվող *կասկածյալի կամ մեղադրյալի* ***ոչ պատշաճ վարքագծի*** դրսևորումները բացահայտվում են նույն օրենսգրքի 135-րդ հոդվածում:

Այսպես, **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝**

1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:

Գրավի՝ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց հանդիսանալը նշանակում է, որ այն առնվազն իր **կիրառման նպատակով** (հիմքերով) պետք է համարժեք լինի կալանավորմանը: Այլ կերպ ասած՝ գրավը պետք է ուղղված լինի այն

նույն նպատակին, որին ուղղված է կալանավորումը: Միաժամանակ, գրավը որպես խափանման միջոցի տեսակներից մեկը, պետք է կիրառվի այն նույն նպատակներով, որոնք նախատեսված են խափանման բոլոր միջոցների համար (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134, *քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով):*

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում գրավի կիրառման նպատակը սահմանափակվել է և իբրև այդպիսին է սահմանվել **քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը:**

Օրենսդրի կողմից գրավի կիրառման նպատակի սահմանափակման մասին է վկայում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումը, ըստ որի՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ դատախազի կողմից դատարանին դիմելու հիմքն առկա է միայն այն դեպքում, **եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք:**

Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի այնպիսի դրսևորումները կանխելը, ինչպիսիք են գործի **քննությանը խոչընդոտելը կամ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելը,** գրավի կիրառման նպատակների մեջ չեն մտնում: Նույն կերպ, նույն գործողությունների կատարումը հիմք չեն գրավը պետության եկամուտ դարձնելու համար:

Օրենսդրական այսպիսի կարգավորումների պայմաններում, հաշվի առնելով այն, որ կալանքի փոխարեն գրավի կիրառումը չի ծառայի անձի պատշաճ վարքագծի ապահովման նպատակին, մասնավորապես, չի կանխի կասկածյալի կամ մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելը կամ այլ հանցանք կատարելը, ուստի դատական պրակտիկայում ողջամտորեն անհրաժեշտություն է առաջանում կալանքը չփոխարինել դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով, քանի որ գրավը չի ծառայի այն նպատակին, ինչին ծառայում է կալանքը: Այս պարագայում էլ վտանգվում է անձի ազատության իրավունքն այնքանով, որքանով գրավի՝ որպես կալանքի այլընտրանքային խափանման միջոցի գոյության պայմաններում դատարանները կխուսափեն գրավ կիրառելուց և առավել նպատակահարմար կհամարեն անձին զրկել ազատությունից՝ վերջինիս պատշաճ վարքագիծն ապահովելու համար:

Հարկ է նկատել, որ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ իր գնահատական է արտահայտել 21. 11. 2017թ. թիվ ՍԴՈ-1387 որոշման մեջ՝ 7-րդ կետում:

Հատկապես, կապված գրավի կիրառման նպատակի հետ՝ հարկ է մեջբերել նշված որոշման մեջ արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ անձը, որի նկատմամբ քրեական վարույթի շրջանակներում օրինական հիմքով կիրառվել է խափանման (հարկադրանքի) որևէ միջոց (Օրենսգրքի 134-րդ հոդված), չի կարող և իրավասու չէ տվյալ միջոցի կիրառման ողջ ժամանակահատվածում իրացնել կամ լիարժեք իրացնել իր անձնական ազատության իրավունքը: Խափանման միջոցի, այդ թվում և՝ գրավի, կիրառման իրավական նպատակը հենց օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելն է: ***Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանված է կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ (այսինքն՝ նաև գրավի) կիրառման հիմքը, համաձայն որի՝ մեղադրյալի նկատմամբ այն կարող է կիրառվել միայն այնպիսի դեպքերում, երբ «...բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները», այսինքն՝ թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, չխոչընդոտել գործի քննությանը, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրել, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալ և այլն»*** (ընդգծումը կատարված է Կենտրոնի կողմից)*:*

ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումն արդեն իսկ փաստում է, որ գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց պետք է կիրառվի այն նույն նպատակներով և հիմքերով, որոնք սահմանված են կալանավորման համար: Հետևաբար, գրավի կիրառմամբ պետք է ապահովվի նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից գործի քննությանը չխոչընդոտելը, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն չգործադրելը և այլն:

Ուստիև, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում գրավի կիրառման հիմքերի և նպատակի սահմանափակումը բացառապես վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելն ապահովելով, արդարացի չէ և հակասում է գրավի ինստիտուտի էությանն ու նշանակությանը՝ միաժամանակ հանգեցնելով անձի ազատության սահմանադրական իրավունքի խախտման այնքանով, որքանով օրենսդրական մակարդակով պայմաններ է ստեղծվում դատական պրակտիկայում գրավի կիրառումից խուսափելու համար՝ ապահովելու համար գործի քննությանը չխոչընդոտելու կամ դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն չգործադրելու նպատակի իրականացումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է:

Համակարգող՝ **Լյուդվիկ Դավթյան**